Կորոնավիրուսի Ճարտնակական Հետևանքները

2021թ. մարտին Հավայան կղզիներում թեթև մարդատար ավտոմեքենաների վարձակալության գինը հասել էր այնպիսի բարձրունքների, որ մարդիկ ստիպված օգտվում էին փոքր բեռնատար ավտոմեքենաներից, որոնք հիմնականում օգտագործվում են կահույք և այլ ծանր ու խոշոր ուղեբեռ տեղափոխելու նպատակով (Vera & Sutton, 2021): Սա կորոնավիրուսի համաճարակի հերթական հետևանքն է, որն առաջացել է վերջին տարվա ընթացքում պահանջարկի և առաջարկի աննախադեպ տատանումների պատճառով:

Նախ 2020թ. մարտին, երբ ամբողջ աշխարհը անսպասելի կանգ առավ, և բոլոր գրասենյակներն ու արտադրամասերը ժամանակավորապես դադարեցրին կամ խիստ սահմանափակեցին իրենց գործունեությունը, ոլորտների մեծամասնությունն ունեցավ պահանջարկի և առաջարկի կտրուկ անկում: Պահանջարկի տեսանկյունից մենք դադարեցինք օգտվել սրճարաններից, հասարակական տրանսպորտից, հետաձգեցինք տան վերանորոգման պլանները և որոշ ժամանակ սահմանափակեցինք մեր ծախսերը միայն կենսականորեն անհրաժեշտ ապրանքատեսակներով: Առաջարկի տեսանկյունից ունեցանք տնտեսվարողներ, որոնց գործունեության վրա դրվեցին խիստ սահմանափակումներ: Նրանք հայտնվեցին այնպիսի իրավիճակում, որից հաճախ ընտրվող ելքը ակտիվների վաճառքն էր: Այսպիսով, որոշ կազմակերպություններ ստիպված եղան վաճառել իրենց ակտիվների զգալի մասը, դրանով իսկ սահմանափակելով սեփական արտադրական կարողությունը, ինչն էլ ներկայումս հանգեցնում է որոշ ապրանքատեսակների սակավությանը: Հավայան կղզիներում մեքենաների վարձույթով զբաղվող ընկերությունները ստիպված էին վաճառել այդ պահին չօգտագործվող մեքենաների մի մասը, ինչի շնորհիվ ի վիճակի եղան դիմակայել համավարակի նետած

մարտահրավերներին և գոյատևել մինչև կյանքի բնականոն հոսքի վերադարձը: Սակայն կյանքի բնականոն հոսքի վերադարձն իր հետ բերեց պահանջարկի կտրուկ աճ, որին, արդեն, նրանք պատրաստ չէին:

Մեքենաների այս սակավությունը հանգեցրեց անհավանական գնաճի: Մեքենաների օրավարձը հասավ հարյուրավոր դոլարների, այն դեպքում, որ վերոնշյալ՝ բեռնափոխադրման համար նախատեսված մեքենաների օրավարձը կազմում էր ընդամենը 20 ԱՄՆ դոլար որոշ հավելավճարով (Sampson, 2021): Առանձին վերցված այս զարմանալի փաստը ինքնին դեռ չի նշանակում, որ համաշխարհային տնտեսությունը կանգնած է աննախադեպ գնաճի և ապրանքատեսակների սակավության առջև, սակայն Հավայան կղզիներում ավտոմեքենաների վարձույթը մեկն է բազմաթիվ այլ ոլորտների շարքում, որտեղ նկատվում են խորքային խնդրիներ:

Ամերիկյան CNN պարբերականը վերջերս հրապարակել էր ցանկ, որում տեղ էին գտել հավի միսը, փայտը, միկրոչիպերը, որոշ մետաղներ և այլ նյութեր ու պարագաներ, որոնց միավորում էր սակավությունը: Այս ապրանքատեսակների մեծամասնության դեպքում սակավության հիմնական պատճառներից է համարվում համավարակի պայմաններում դրանց առաջարկի և պահանջարկի կտրուկ տատանումները: Օրինակ կետչուպի փոքր տարաները, որոնք հաճախ հանդիպում են արագ սննդի կետերում, սկսեցին շատ ավելի շատ օգտագործվել, երբ մարդիկ սկսեցին ավելի հաճախ օգտվել սննդի առաքման ծառայություններից: Մյուս ռեստորաններն ու սրճարանները նույնպես սկսեցին օգտվել այդ տարաներից, ինչը հանգեցրեց շուկայում դրանց բացակայության:

Համաշխարհային տնտեսության աստիճանական վերաբացման պայմաններում հնարավոր գնաճը դարձել է ամենաքննարկվող վտանգներից մեկը: ԱՄՆ Դաշնային

Պահուստի նախագահ Ջերոմ Փաուելն իր հայտարարություններում հաճախ օգտագործում է “transitory” կամ անցումային տերմինը՝ ներկայումս նկատվող գնաճը նկարագրելիս, սակայն հասարակության և հատկապես ներդրողների մի ստվար զանգված անհանգստացած է անցումային գնաճի տևողությամբ և մաշտաբներով (Summers, 2021): Մեկ տարուց ավել որոշ չափով սահմանափակված համաշխարհային տնտեսության ամբողջական վերաբացումը բերելու է պահանջարկի հերթական աճին, ինչում մեծ դեր կունենան նաև կառավարությունների կողմից այս ընթացքում ապահովված հավելյալ միջոցները, մարդկանց խնայողությունները ժամանցի վայրերի փակ լինելու պատճառով, և այլն (Richter, 2021): Այս համատեքստում ֆինանսական շուկաներում նկատվում է ներդրողների կողմից անվստահություն և գնաճի վախով պայմանավորված անկայունություն: Զրոյական վերաֆինանսավորման տոկոսները գրեթե բոլոր կարևորագույն արժույթների համար հանգեցրել են այլ ակտիվների թռիչքաձև աճի, ինչպես, օրինակ, նկատվում է ԱՄՆ արժեթղթերի շուկայում: Ներդրողների հիմնական խնդիրը գնաճի հետ կապված այն է, որ անկառավարելի դառնալու դեպքում այն կստիպի Փաուելին դիմել կտրուկ քայլերի՝ այն կանխելու նպատակով: Գնաճի կանխարգելման միջոցներից է վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումը, որը հանգեցնում է պարտատոմսերի շուկայում տոկոսների բարձրացմանը, որն էլ իր հերթին նշանակում է, որ պարտատոմսերը դառնում են համեմատաբար ավելի շահավետ ներդրում: Բարձր տոկոսադրույքով պարտատոմսերը գրավում են ավելի շատ ներդրողներ, որոնք վաճառում են իրենց այլ ակտիվները, օրինակ՝ որոշ արժեթղթեր, այդպիսով նպաստելով դրանց արժեզրկմանը:

Չնայած նրան, որ գնաճի մասին զգուշացումներն ու մտավախությունները բավականին հաճախ են հանդիպում, ներդրողների շրջանում միևնույն է կա վստահություն,

որ տոկոսադրույքների բարձրացումներ մոտ ապագայում չեն ակնկալվում: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումը, ըստ Ֆիլիպսի կորի, հանգեցնում է կարճ ժամանակային հորիզոնում գործազրկության աճի, ինչն, առանց այդ էլ համավարակի խոշորագույն հետևանքներից է և կառավարությունների համար ամենահրատապ խնդիրներից մեկը: ԱՄՆ–ում այս տարվա ապրիլին դեռ 8.2 միլիոն ավել գործազուրկ կար համեմատած 2020թ. փետրվարի հետ (Wolf, 2021): Եվրոպական երկրներում նույնպես աշխատուժը դեռ չի վերադարձել մինչև համավարակը եղած ցուցանիշներին, այնպես որ, առայժմ գնաճն ընդունվում է որպես անհրաժեշտ երևույթ տնտեսության վերականգնման գործում (Eurostat, 2021):

Հղումներ

Eurostat. (2021). *Unemployment statistics*. Վերցված հետևյալ աղբյուրից. Eurostat: https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=Unemployment_statistics

Richter, W. (2021). *Free-Money Stimmies Blow Out Consumer Income & Spending on Goods for a Glorious WTF Chart of the Yea*. Վերցված հետևյալ աղբյուրից. Wolf Street: https://wolfstreet.com/2021/04/30/wtf-charts-of-the-year-free-money-from-the-sky-stimmies-blow-out-consumer-income-and-spending-on-durable-goods/

Sampson, H. (2021). *Tourists in Hawaii are driving U-Hauls because rental cars are so expensive*. Վերցված հետևյալ աղբյուրից. The Washington Post: https://www.washingtonpost.com/travel/2021/05/03/hawaii-uhaul-car-rental-shortage/

Summers, L. H. (2021). *Opinion: The inflation risk is real*. Վերցված հետևյալ աղբյուրից. The Washington Post: https://www.washingtonpost.com/opinions/2021/05/24/inflation-risk-is-real/

Vera, A., & Sutton, J. (2021). *Rental car prices are so high in Hawaii, tourists are renting U-Haul trucks*. Վերցված հետևյալ աղբյուրից. CNN Business: https://edition.cnn.com/2021/04/25/us/hawaii-u-haul-tourist-rental-trnd/index.html

Wolf, Z. B. (2021). *Here's the truth about the labor shortage*. Վերցված հետևյալ աղբյուրից. CNN Politics: https://edition.cnn.com/2021/05/22/politics/what-matters-labor-shortage/index.html